

ԹՈՒՐՔԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Գրեց՝ ՀԱՅ ԳՆԴՈՒՆԻ

Գ.

ՉԱՅ կաղմակերպուած ազգ մը, որ զուրկ ըլլայ հայրենիքի գաղափարէն: Եթէ տըկար ու պարտուած ժողովուրդները լացի, կոծի, յիշատակարաններու եւ ամանութեանց ցորարան կը համարեն յափշտակուած եւ կորսւած երկիրները, յաղթական եւ կանգուն ազգերը իրենց հայրենիքը կը սիրեն աւելի արու եւ զգացական հոգիով: Եւ որովհետեւ աշխարհագրական տարածութիւնները մարդկային արարածի յաւիտենական մաքառումներուն քնական կրկէսն ու դաշտավայրն են, հարցուցէ՛ք հոն բնակող զինուորներուն՝ թէ ո՞ր ճակատը կը նսխանորեն, արդեօք ա՞յն՝ ուր քաջութեան դասերն են վստակած, թէ մի՞ւսը, ուր իրենց կողերն են կոխկռտուած եւ հարիւրեակներ ու հազարեակներ են կորսնցուցած, սպանեալ եւ վիրաւոր, գերի ու անյայտացած:

Մարտիկին պատասխանը պիտի ըլլայ չոր եւ պոպաւտեայ: Զէնքի արհեստաւորը, հետեւակ կամ ձիաւոր, ժուժկալ եւ առաքինի է: Դարձաբձիկ քառեր է սորված: Ժամանակ եւ արամադրութիւն չունի երկարաբանելու, իմաստութիւն սակարկելու: Եւ անոր ձայնը հզօր է ու անդաւաճան:

— Կոռու՞ղ եմ, սիրտ եւ զգացում ունիմ գինակիցներս ողբալու, որ պարտութեան օրը ինկան անգարձ: Բայց գեղեցիկ է յաղթանակը, ազնուացնող ու խանդավառող: Յաղթելով փրկեցի իմ եւ հարազատներուս կեանքը: Յաղթելով փրկեցի տնակս եւ այգիս, գիւղակս եւ գաւառս, նահանգս ու հայրենիքս: Յաղթանակը ռազմիկին ժպտող գեղուհին է, որուն կարօտովը այնքան տոչորեր ենք խրամներու մէջ, դիրքերու վրայ, պահակ կամ գիտող, խուզարկու եւ որսորդ, նոնարձակ կամ հրացանաձիգ: Յաղթանակ, յաղթանակ: Հայրենի-

քը ինքր ամենէն չքեղ յաղթանակն է ...

Այսպէ՛ս կը խօսին կռուիլ եւ յաղթել գիտցողները:

Եւ թուրքերը, կռուի ու պայքարի հին ռազմիկներ, երբ յաղթութեանց շարաններու չափ պարտութեան սեւ էջեր ունին արձանագրած, ինչո՞ւ եւ ինչպէ՞ս չպիտի սիրէին այն երկիրը՝ ուր իրենց ազգային դոյութեան ամենէն ճակատագրական սովինամարտը մղեցին Մուսթաֆա Քեմալի առջեւն ինկած՝ մէկ սիրտ եւ մէկ մարմին:

Հայրենիք չունեցողները եւ դայն չաշտողները կռուիլ չեն գիտեր, կ'ատեն կռիւր եւ կը խորշին անկէ: Վկայ 20-րդ դարուն մէջ դերի ազգերու դոյութեան մաստը:

Հայութիւնը վարկարեկուած ապրանք է ազատագրութեան տօնավաճառի դարակները զարգացող միախաչ անոր համար, որ չէ հասկըցած կռուին օգոստափառ հրայրքը, չէ մարտած զարնելու եւ կտրելու սրբազան օրէնքին ուժն ու հեղինակութիւնը, չէ ուզած կռուիլ՝ անասնական կռիւի նշանաբանին տակ թագնւած արհեստական ու մեքենական թափով: Եւ եթէ կռուած ալ է, լոկ անհատներ ու փոքրաթիւ խմբակներ ճամբած է ռազմարեմբերուն եւ խրամներուն երկայնքը, որոնք հերոսացման եւ հրաշագործութեան օրինակներով իսկ չեն յաջողած փրկել ազգին փոթորկալից նաւը տեսանելի եւ աներեւոյթ ամէն կարգի խութերէ եւ ապառաժներէ: Ու արդիւնքը եղած է գերութիւն, միշտ ստրկութիւն եւ տուալտանք:

Ասոր հակառակ, եթէ պայքարիլ ու մարտնչիլ գիտնայինք համօրէն ազգութեամբ, եթէ հայրենիքի գաղափարին տայինք գիրքերու եւ թուղթերու վրայ դրոշմուած ողբասացութիւններէն տարրեր մեծարանք մը եւ զոհարե-